ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» հուլիսի 2021թ. № 270

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 828-Ն որոշմամբ հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման և հողամասերի գործառնական նշանակության փոփոխության կարգի 2-րդ և 10-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով և 50-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1054-Ն որոշումը, «Արտյոմ Սաքանյան» Ա/Ձ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2021 թվականի հուլիսի 19-ի թիվ 01/111.6/05877-2021 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0058-0011, 06-006-0058-0012, 06-006-0058-0013, 06-006-0058-0014, 06-006-0058-0015, 06-006-0058-0016 կադաստրային ծածկագրերից առանձնացված 0,92834 հեկտար ընդհանուր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0058-0011, 06-006-0058-0012, 06-006-0058-0013, 06-006-0058-0014, 06-006-0058-0015, 06-006-0058-0016 կադաստրային ծածկագրերից առանձնացված 0,92834 հեկտար ընդհանուր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասին տրամադրել «ք.Սպիտակ, Թումանյան փողոց, թիվ 100» հասցեն:
3. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը և 2-րդ կետով տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:
4. Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել հողային հաշվեկշռում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. հուլիսի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«20» հուլիսի 2021թ. № 271

ԱՐՍԻՆԵ ՄԱԹՈՍՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասի, 110-րդ հոդվածի 1-ին մասի, 130-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Արսինե Մաթոսյանի դիմումը, ***որոշում եմ***.

1. 2021 թվականի հուլիսի 21-ին Սպիտակ համայնքի ղեկավարի օգնական Արսինե Մաթոսյանին ազատել զբաղեցրած պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2019 թվականի հուլիսի 31-ին կնքած աշխատանքային պայմանագիրը:

Վերջին աշխատանքային օր համարել՝ 2021 թվականի հուլիսի 20-ը:

2.Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ և վճարել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ.հուլիսի 20
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«20» հուլիսի 2021թ. № 272

ՄԱՑԱԿ ՄԱԹՈՍՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և 62-րդ կետով, հաշվի առնելով, որ Հովհաննես Մաթոսյանի մահից հետո Շահումյան փողոցի վրա գտնվող 100,7 քառակուսի մետր մակերեսով նկուղը ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2021 թվականի հունիսի 7-ի վկայագրի փոխանցվել է Մացակ Հովհաննեսի Մաթոսյանին, սակայն նկուղի «ք.Սպիտակ, Շահումյան փողոց, թիվ 3բ» հասցեն չի համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-ն որոշման պահանջներին, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2021 թվականի հունիսի 7-ի վկայագիրը և Մացակ Մաթոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Մացակ Հովհաննեսի Մաթոսյանին ժառանգաբար փոխանցված Սպիտակ համայնքի Շահումյան փողոցի վրա գտնվող 100,7 քառակուսի մետր մակերեսով նկուղի «ք.Սպիտակ, Շահումյան փողոց, թիվ 3բ» հասցեն փոփոխել «ք.Սպիտակ, Շահումյան փողոց, 3/2 շենք, նկուղ թիվ 1» հասցեով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. հուլիսի 20
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«20» հուլիսի 2021թ. № 273

ՄԱՑԱԿ ՄԱԹՈՍՅԱՆԻՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐԻ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով և 50-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հովհաննես Մաթոսյանի մահից հետո Սպիտակ համայնքի Ս.Ավետիսյան փողոցի վրա գտնվող անշարժ գույքն ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2021 թվականի հունիսի 7-ի վկայագրի փոխանցվել է Մացակ Մաթոսյանին, սակայն անշարժ գույքին նախկինում հասցե չի տրամադրվել, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2021 թվականի հունիսի 7-ի վկայագիրը և Մացակ Մաթոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Մացակ Հովհաննեսի Մաթոսյանին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի փոխանցված՝ Սպիտակ համայնքի Ս.Ավետիսյան փողոցի վրա գտնվող 0,418 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող շինություններին տրամադրել «քաղաք Սպիտակ, Ս.Ավետիսյան փողոց, 5-րդ նրբանցք, թիվ 12» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. հուլիսի 20
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«20» հոկտեմբեր 2021թ. № 274

ՄԱՐԱՏ ՓԱՆՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով և 50-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2089604 վկայականը և Մարատ Փանոսյանի ներկայացուցիչ Մարտուն Փանոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Մարատ Փանոսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Քըրք-Քըրքորյան փողոցի վրա գտնվող 06006 304-74 կադաստրային ծածկագրով 0.055 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 15.0 քառակուսի մետր մակերեսով լոգարանին, 32.0 քառակուսի մետր մակերեսով անասնագոմին և 151.9 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը տրամադրել «ք.Սպիտակ, Քըրք-Քըրքորյան փողոց, թիվ 40/1» հասցեն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. հոկտեմբեր 20
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«22» հուլիսի 2021 թվականի N 235

ԱՐՏԱԿ ՎԱՆԻՉԿԱՅԻ ՄԱԹՈՍՅԱՆԻՆ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, հիմք ընդունելով Արտակ Վանիչկայի Մաթոսյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Արտակ Վանիչկայի Մաթոսյանին 2021 թվականի հուլիսի 22-ից նշանակել Սպիտակ համայնքի ղեկավարի օգնական և նրա հետ կնքել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր:

2. Աշխատավարձը՝ համաձայն հաստատված պաշտոնային դրույքաչափի՝ 120 000 (հարյուր քսան հազար) ՀՀ դրամ: Աշխատավարձը համարել փոփոխված՝ Սպիտակի համայնքի ավագանու կողմից պաշտոնային դրույքաչափի փոփոխմանը համապատասխան:

3. Արտակ Վանիչկայի Մաթոսյանի համար սահմանվում է աշխատաժամանակի նորմալ տևողություն՝ շաբաթական 5 աշխատանքային օր՝ օրական 8 ժամ ժամանակով, ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 20 աշխատանքային օր տևողությամբ և ամենամյա լրացուցիչ արձակուրդ՝ 4 աշխատանքային օր տևողությամբ:

4. Աշխատանքային գործառույթները՝ համաձայն աշխատանքային պայմանագրի:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտակ Վանիչկայի Մաթոսյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից և գործում է մինչև համայնքի նոր ղեկավարի լիազորություններն ստանձնելուց հետո այդ պաշտոնում նոր նշանակում կատարվելը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. հուլիսի 22
ք.Սպիտակ